6. «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 25-ի N 27-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծի

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 27-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հուլիսի 25-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության ընտրության և վերապատրաստման կարգը հաստատելու մասին» **N 27-Ն հրամանի՝**

- **վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների, մանկավարժական աշխատողների և դաստիարակի օգնականի վերապատրաստող կազմակերպության ընտրության և վերապատրաստման կարգը հաստատելու մասին».

- 1-ին կետը շարադրել **հետևյալ խմբագրությամբ.**

«Հաստատել նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների, մանկավարժական աշխատողների և դաստիարակի օգնականի վերապատրաստող կազմակերպության ընտրության և վերապատրաստման կարգը՝ համաձայն հավելվածի։»:

2. Հրամանի հավելվածի՝

- **վերնագրում և ողջ տեքստում «**տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստող» բառերը փոխարինել «տնօրենների, մանկավարժական աշխատողների և դաստիարակի օգնականի վերապատրաստող» բառերով՝ բոլոր հոլովաձևերով**.**
- **3-րդ կետում «համակցված» բառից հետո լրացնել (առնվազն 60 % առկա)**
- **6-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 53-րդ, 53.1-րդ, 54-րդ, 55-րդ և 56-րդ կետերում «մանկավարժական աշխատողի» բառերից հետո լրացնել «և դաստիարակի օգնականի» բառերով**՝ բոլոր հոլովաձևերով**.**
- **29-րդ կետում «**թեմատիկ պլան և մոդուլ» բառերից հետո լրացնել «մանկավարժական աշխատողների համար և 40 ժամյա վերապատրաստման թեմատիկ պլան և մոդուլ՝ դաստիարակի օգնականի համար».
- 32-րդ կետում «30-օրյա» բառը փոխարինել «20-օրյա» բառով.
- 34-րդ կետի 1-ին ենթակետում «մանկավարժական աշխատողների» բառերից հետո լրացնել «, դաստիարակի օգնականի» բառերով.
- 48-րդ կետում «աշխատողները» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ նախակրթարանների)
- **50-րդ կետում «15» թիվը փոխարինել «5» թվով.**
- **50-րդ կետից հետո լրացնել նոր 50.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝**

«50.1. Ոչ պետական հաստատության տնօրենը՝ ամեն տարի մինչև սեպտեմբերի 15-ը նախարարությանն է ներկայացնում տվյալ տարվա վերապատրաստման ենթակա մանկավարժական աշխատողների ցանկը:».

- **51-րդ կետում «30» թիվը փոխարինել «15» թվով.**
- **Ձև 1, 2, 3, 4, 6 և 8-ում «մանկավարժական աշխատողի» բառերից հետո լրացնել «և դաստիարակի օգնականի» բառերով**՝ բոլոր հոլովաձևերով**:**

3. **Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:**

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ